

ԱՐՈՒՅՅԱԿ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ

**Դաշնակահարուհի,
Խ. Արվյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարանի դասախոս**
E-mail: arusyak57@mail.ru
DOI:

Խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ա. Գ. Ասատրյանի (2.11.2023 թ.)
Գրախոս՝ (30.10.2023 թ.),
հեղինակը ներկայացրել է հրատարակության՝ (22.10.2023 թ.):

ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆ. «ՄԵՆՔ ԴԱՇՆԱՍՈՒՐ ԵՆՔ ՆՎԱԳՈՒՄ»

Ամփոփում

Հոդվածը նվիրվում է հայ տաղանդավոր կոմպոզիտոր Արամ Արամի Սաթյանի «Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուին, որը իրենից ներկայացնում է սիստեմավորված դաշնամուրային ձեռնարկ-ժողովածու և նպատակաուղղված է պատանի դաշնակահարի կատարողական ունակությունների զարգացմանը: Այն առաջինն է հայ երաժշտարվեստում իր տեսակով, քանզի ստեղծագործությունների հեղինակը հենց ինքն է՝ Արամ Սաթյանը: Հոդվածում արված են որոշ դիտարկումներ մանրանվագների կոմպոզիցիոն առանձնահատկությունների և մտահղացումների շուրջ: Ձեռնարկ-ժողովածուն հրատարակվել է երեք անգամ՝ 2007, 2015 և 2021թվականներին:

Բանալի-բառեր. Արամ Սաթյան, դաշնամուրային, ձեռնարկ-ժողովածու, կոմպոզիտոր, պոլիտոնալ, ոճային, մանրանվագներ:

Abstrakt

Pianist, pedagogue of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan Arusyak Kostanyan.- "Aram Satian. «We play the Piano»". The article devoted to Aram Satian's piano notes collection "We play Piano", which is a systematized piano schoolbook-collection at developing the performing abilities of a young pianist. It is the first schoolbook-collection of its kind in Armenian music, where the author of all is Aram Satian himself. The article makes some observation about the compositional features and ideas of miniatures. The collection was published three times: 2007, 2015 and 2021.

Key Words: Aram Satian, piano, schoolbook-collection, composer, polytonal, style, notes.

Աբստրակտ

Пианистка, преподаватель Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна Арусяк Амазасповна Костанян. - “Арам Сатян. «Мы играем на рояле»”.

Статья посвящена фортепианному сборнику Арама Сатяна «Мы играем на рояле», который является систематизированным фортепианным сборником-пособием, направленным на развитие исполнительских способностей юного пианиста. Он является первым в своем роде сборником-пособием в армянской музыке, т.к. автором всех произведений является сам Арам Сатян. В статье рассмотрены некоторые композиционные и технические особенности пьес. Сборник издавался трижды: в 2007, 2015 и 2021 годах.

Ключевые слова: Арам Сатян, фортепиано, сборник-пособие, композитор, полифоничность, стиль, пьеса.

Ներածություն

Հայկական դաշնամուրային երաժշտությունն անցել է զարգացման մեծ ճանապարհ: Այն սկսվել է XIX դարի կեսերից և ինտենսիվ շարունակվում է մինչև այսօր: Այդ ժամանակահատվածում ստեղծվել է հարուստ դաշնամուրային գրականություն, որը ներկայացվել է մեծ և փոքր կտավի ստեղծագործություններով, որոնք առանձնաձև են թեմատիկ բազմազանությամբ, ստեղծվել է յուրօրինակ ազգային ոճ: «Հայաստանի դաշնամուրային երաժշտությունն ունի ավելի քան մեկդարյա պատմություն: Դրա ստեղծման, զարգացման և տարածման գործում հատկապես անհրաժեշտ է հիշատակել տաղանդավոր և խանդավառ երաժիշտներ Տ. Չոխաճյանի (1837-1898 թթ.), Մ. Եկմալյանի (1856-1905 թթ.), Ն. Տիգրանյանի (1856-1951 թթ.), Գ. Կորգանովի (1958-1890 թթ.) անունները» (1): Դաշնամուրային երաժշտության զարգացման գործում մեծ է Կոմիտասի (1865-1935 թթ.) և Ա. Սպենդիարյանի (1871-1928 թթ.) դերը, որոնք հայկական դասական երաժշտության հիմնադիրներն են: Կոմիտասի գրչին են պատկանում ժողովրդական պարերի ու երգերի մշակումները դաշնամուրի համար: Բազմաթիվ դաշնամուրային ստեղծագործություններ ունի Ա. Սպենդիարյանը՝ «Դաթարմա», «Դրիմյան էտյուդ» և այլն: «Հայկական դաշնամուրային երաժշտությունը հարստացրել են իրենց ստեղծագործություններով կոմպոզիտորներ Ս. Նադդյանը (1921-1988 թթ.), Յ. Գևորգյանը (1931-2016 թթ.), Ս. Սամվելյանը (1927-1982 թթ.), Գ. Չքչյանը (ծնվ. 1929 թ.) և այլք» (1. էջ 215): Դժվար կլինի թվել բոլոր այն հայ երախտավորների անունները, որոնք իրենց ներդրումն ունեն հայկական դաշնամուրային երաժշտության զարգացման գործում: Այս ցանկում պետք է նշենք արվեստի վաստակավոր գործիչ, Կոմիտասի անվան ԵՊԿ կոնսերվատորիայի պրոֆեսոր, կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր Արամ Արամի Սաթյանի անունը (ծ. 1947 թ.)՝ Սաթյանների կոմպոզիտորական գերդաստանի վառ ներկայացուցիչ:

**«Մենք դաշնամուր ենք նվագում» ձեռնարկ-ժողովածուի ստեղծման
նախապայմանները և անհրաժեշտությունը**

Արամ Սաթյանը, լինելով բազմաժանր կոմպոզիտոր, ով ստեղծագործել է ինչպես սիմֆոնիկ, կամերային և վոկալ ժանրերում, իր ուրույն խոսքն է ասել նաև դաշնամուրային երաժշտության բնագավառում: Նրա մեծագույն նվաճումներից է «Մենք դաշնամուր ենք նվագում» ձեռնարկ-ժողովածուն, որը կարճ ժամանակում դարձել է երաժշտական դպրոցների ուսումնական երկացանկի անհրաժեշտ մասը:

Հոդվածի շրջանակներում կփորձենք ընդհանուր գծերով վերլուծել և լուսաբանել Արամ Սաթյանի «Մենք դաշնամուր ենք նվագում» դաշնամուրային ժողովածուում տեղ գտած ստեղծագործությունները, որոնք հանդիսանում են կոմպոզիտորի երկարամյա ստեղծագործական աշխատանքի արդյունք: Կոմպոզիտորը խոստովանում է. «Դեռևս երիտասարդ տարիքում, երբ իմ երեխաները փոքր էին և հաճախում էին երաժշտական դպրոց, զգացի մանկական դաշնամուրային գրականության պակաս և ցանկացա, որ իմ երեխաները նվագել սովորեն նաև ի՛նչ գրած ստեղծագործություններով»: Տարիների ընթացքում գրած մանրանվագները կոմպոզիտորը սիստեմավորեց, դասավորեց դրանք ըստ բարդության հերթականության և ծնվեց «Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուն, որը ո՛չ թե ուղղակի մանկական ալբոմ է, այլ երեխայի երաժշտական զարգացմանը նպատակաուղղված ձեռնարկ-ժողովածու:

«Անկախության շրջանում Արամ Սաթյանը ստեղծագործել է նաև մանուկների համար: Խոսքը «Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուի մասին է, որը հրատարակվել է 2007-ին: Կոմպոզիտորն այն մտահղացել է որպես դաշնամուրային դպրոց, որը նախատեսված է ո՛չ միայն երաժշտական դպրոցի սաների, այլ նաև պրոֆեսիոնալ դաշնակահարների համար» (2. էջ 136):

Դաշնամուրի համար կազմված մեզ հայտնի ձեռնարկ-ժողովածուներից է խորհրդային շրջանում հրատարակված Լ. Նիկոլաևի «Школа игры на фортепиано» ձեռնարկը, որը մինչ այժմ չի կորցրել իր պահանջված և օգտակար լինելը: Հայ կոմպոզիտորները նույնպես մտածել են այս խնդրի շուրջ: Գրեթե բոլորը գրել են ստեղծագործություններ մանուկների համար, նրանցից ոմանք էլ ստեղծել են մանկական ալբոմներ՝ առավել հայտնի են Արամ Խաչատրյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Էդվարդ Միրզոյանի մանկական ալբոմները: Երաժշտական դպրոցներում շրջանառվում է նաև Կ. Թովչյանի և Հ. Իսպիրյանի կողմից կազմած և հրատարակած «Դաշնամուրային ձեռնարկ»-ը, որն իր մեջ ներառում է հայ ժողովրդական երգեր, մեղեդիներ և նաև կոմպոզիտորական ստեղծագործություններ: Սույն ձեռնարկը հանդիսանում է դաշնամուրի դպրոց «հայացված» տարբերակով:

Արամ Սաթյանի «Մենք դաշնամուր ենք նվագում» դաշնամուրային ձեռնարկ-ժողովածուն չունի նմանատիպը հայ երաժշտարվեստում, քանզի բոլոր ստեղծագործությունների հեղինակը հենց ինքն է՝ Արամ Արամի Սաթյանը: Ժողովածուում տեղ գտած յոթ տասնյակից ավելի ստեղծագործություններն առանձնանում են թեմատիկ, ոճային և ժանրային բազմազանությամբ: Կոմպոզիտորը երեխաներին և, ընդհանրապես դաշնակահար-կատարողին, նվիրել է դաշնամուրային երաժշտության բացառիկ գոհարներ: Ամեն մի ստեղծագործությունը մի բացահայտում է կատարողի համար: Կոմպոզիտորը, առաջին մասնագիտությամբ լինելով դաշնակահար, պարզ մանրանվագները գրել է փոքրիկ կատարողին համապատասխան ֆակտուրայով, ավելի բարդերը՝ հարմար դաշնակել է և ստեղծել հիրավի կոմպոզիտորական մտքի հրաշակերտ ստեղծագործություններ: Մանրանվագների ոճային, ժանրային, կառուցվածքային, հարմոնիկ վերլուծությունը կօգնի պատանի կատարողին կատարողական նվագային շարժումների մշակման միջոցով դյուրին դարձնել սովորելու ընթացքը, իսկ բովանդակային գեղարվեստական կերպարների կերտումը կնպաստի երաժշտական մտածողության ձևավորմանը:

Ժողովածուն հրատարակվել է երեք անգամ՝ 2007, 2015 և 2021թվականներին: Առաջին հրատարակության մեջ Արամ Սաթյանն իր հեղինակած դաշնամուրային մանրանվագների հետ մեկտեղ ժողովածուում ներառել է նաև սաթյանական կոմպոզիտորական գերդաստանի ներկայացուցիչների տարբեր ժամանակներում գրված դաշնամուրային նմուշները՝ Աշոտ Սաթյանի, Արամ Սաթունցի, Դավիթ Սաթյանի, Արթուր Սաթյանի և Աշոտ (կրտսեր) Սաթյանի ստեղծագործությունները: 2015-ի, այնուհետև 2021-ի հրատարակությունները բաղկացած են բացառապես Արամ Սաթյանի գործերից: Նորացված ժողովածուները կոմպոզիտորը համալրել է նոր ստեղծագործություններով:

Ա. Սաթյանի մոտեցումները մանրանվագների ժանրային, ոճային, լադային կերտման հարցում

«Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուում զետեղված են մանրանվագներ, որոնք արտացոլում են կատարողական հնտությունների յուրացման առանձնահատկությունները: Չևակառուցողական և կոմպոզիցիոն կառուցվածքի կիրառումը հանդիսացել է կերպարային բովանդակության բացահայտման միջոց: Ժողովածուում առկա փոքրածավալ մանրանվագներն առանձնանում են կերպարների բազմազանությամբ, ձևի հստակությամբ:

Հայկական հնչերանգներով մանրանվագները («Մտորում», «Ժողովրդական», «Ինվենցիա», «Երեկոն սարերում») հեղինակը ներկայացրել է պոլիֆոնիկ ձևով: Ա.Սաթյանը դիմում է պոլիֆոնիայի տարբեր տեսակների՝ ինչպես ենթաձայնային

(«ПОДГОЛОСОЧНАЯ ПОЛИФОНИ» -«Երեկոն սարերում»), այնպես նաև իմիտացիոն բազմաձայնությանը («Ինվենցիա»): Ինվենցիան եռաձայն է և այն հիմնված է հայկական լադային մտածողության վրա: Արտասովոր հնչողությունը, որը բնորոշ է հայկական շարականներին, Ա.Սաթյանը նրբորեն կիրառում է պարզ մանկական մանրանվագներում: «Առվակ», «Շարական», «Աստիճան», «Հարց ու պատասխան», և ավելի հասուն՝ «Ինվենցիա»-ում կոմպոզիտորն անդրադառնում է հայկական միջնադարյան լադերին, կարծես «խաղում է» լադերով: Ավանդական եվրոպական միջնադարյան լադերը կազմված են տետրախորդերից (տետրախորդ՝ չորս ձայներից բաղկացած ձայների հերթականություն, որոնք դասավորված են իրար կողք, այդ պատճառով կազմված են 4, 8, 12, 16 և այլն ձայներից): Հայկական լադի կառուցվածքն այլ է, շրթայական՝ առաջին տետրախորդի վերջին ձայնը դառնում է հաջորդ տետրախորդի առաջինը, և այդպես շարունակաբար: Հայկական լադը բաղկացած է 7, 10, 13 և այլն ձայներից: Երաժշտական միտքը ավարտվում է ո՛չ տոնիկայի վրա: Հայկական լադի կիրառումը ո՛չ ամբողջությամբ, և ո՛չ ուղղակիորեն կարող ենք հանդիպել նաև մյուս մանրանվագներում:

Ազգային երանգներով ստեղծարործությունների հետ մեկտեղ («Ժողովրդական», «Շարական», «Երգ», «Մտորում», «Երեկոյան սարերում» և այլն) կարող ենք հանդիպել չինական հնչերանգներով («Չինական լապտերներ»), ջազային հարմոնիայով հագեցած («Նվիրում Բրուքսին», «Մելամաղձոտ վալս») մանրանվագներ: Կոմպոզիտորը ծանոթացնում է պատանի կատարողին տարբեր երաժշտական ժանրերի հետ՝ էտյուդ, էքսպրոմտ, նոկտյուրն, սոնատին, պրելյուդ, վալս, ինվենցիա, ֆուգետտա, օստինատո; առաջարկում է դաշնակահարին իմպրովիզի հիմունքները և հնարավորություն տալիս կատարել ինքնուրույն իմպրովիզացիա՝ «Թեմա և իմպրովիզացիա» մանրանվագում սկզբում հեղինակը ներկայացնում է թեմատիկ իր տարբերակը, այնուհետև նոտաների տառային նշանակմամբ (ИИФРОВКА) հեղինակն առաջադրում է հարմոնիկ այն հերթականությունը, որի հիման վրա կատարողը պետք է հնարի ինքնուրույն իմպրովիզացիա; զարգացնում է պոլիֆոնիկ մտածելակերպը՝ «Ինվենցիա», «Ֆուգետտա»:

Քանի որ ժողովածուն բավական ծավալուն է, այս հոդվածի սահմաններում հնարավորինս կփորձենք ներկայացնել կոմպոզիտորի ստեղծագործական մոտեցումները, միջոցները, որոնց շնորհիվ հեղինակը կարողացել է իր մտահղացումներն իրականացնել:

Մանրանվագները հեղինակը վերնագրել է երեխաների ներաշխարհին մոտիկ զվարթ, պայծառ և հետաքրքրող վերնագրերով: Դրանք հագեցած են հեղինակի ստեղծագործական ոգեշնչվածության վառ գույներով: Մանրանվագներն ունեն ծրագրային անվանումներ՝ «Պարող տիկնիկը», «Թզուկների քայլերգ», «Աշուն», «Դժվար խնդիր» և այլն: Այսպիսով կոմպոզիտորն սկսնակ երաժիշտ-կատարողին

ներգրավվում է բազմաբնույթ մանկական աշխարհ: Ա.Սաթյանն իր առջև դրել է սկսնակ դաշնակահարի պրոֆեսիոնալ-տեխնիկական կատարողական ունակությունները զարգացնելու խնդիր, այդ պատճառով մանրանվագները հեքազայում են ըստ բարդության աստիճանի: Ժողովածուն պայմանականորեն կարող ենք բաժանել երկու մասի՝ առաջին մասը տարրական դասարանի երեխաների և երկրորդը՝ սկսած «Անուրջներ» մանրանվագից մինչև վերջ, ավելի հասուն երաժիտների համար:

Առաջին քայլերը դաշնամուրով՝ հանդարտ, դանդաղ շարժումներով, երաժշտական գիծը մի ձեռքից մյուսին փոխանցելով («Ձբոսանք», Արջուկ»), այնուհետև ձայները միացված legato նվագելու հմտությունով («Շարական», «Արևիկ», «Աստիճան») հերթականորեն մի մասից մյուսին անցնելու, ձեռքի ծանրությունը մատի ծայրին զգալով, այսպես ասած, մատներով դաշնամուրով «քայլելու» փորձերը: «Եթե սկզբից ևեթ լուրջ ուշադրություն չդարձվի աշակերտի ձեռքերի դրվածքին, ապա դա շատ շուտով կհանգեցնի ձեռքերի լարվածության և հոգնածության: Այդ թերությունների վերացումը հետագայում շատ է դժվարանում, իսկ երբեմն անհնարին՝ և արդյունքը լինում է այն, որ աշակերտը դառնում է տվյալ մասնագիտության համար ո՛չ պիտանի» (3. էջ 3):

Ա. Սաթյանը, ի նկատի ունենալով երեխայի ֆիզիոլոգիան, առաջադրում է ըսկրսնակ դաշնակահարին առաջին կատարողական տարրերը և զգուշությամբ ներգրավվում նրան առաջին հմտությունների տիրապետմանը: Ուսուցչի օգնությամբ երեխան կատարում է դաշնամուրով նվագելու առաջին քայլերը: «Առաջին քայլերը» մանրանվագը դրա պատկերավոր նկարագրությունն է: Մի ձեռքից մյուս ձեռքին փոխանցումները *Lento* տեմպում հնարավորություն են տալիս երեխային կենտրոնանալ դաշնամուրի առջև նստելուն, ձեռքերը հանդարտ բարձրացնելուն և, այնուհետև, հաջորդ հնչյունը խորը, փափուկ հնչողությամբ նվագելուն: Դանդաղ փոխանցումներից հետո ձախ ձեռքում սկսվում են ութերորդների «քայլքը» *pp* և *me* նոտաներով, որը նմանակում է փոքր երեխայի արաջին քայլերին և հետո վազելուն:

Ավանգարդ երաժշտությունը Ա.Սաթյանի դաշնամուրային մանրանվագներում: Նորագույն ժամանակակից նոտագրություն

Հեղինակը պատանի երաժշտին ծանոթացնում է ժամանակակից նոտագրության ձևերին՝ «Առաջին քայլերը» մանրանվագում դիմում է կլաստերի տեխնիկայի օգտագործմանը (երեքից ավել ձայների միաժամանակյա հնչողություն, որոնք դասավորված են փոքր կամ մեծ սեկունդաներով): Հայտնի է, որ կլաստերի տեխնիկան սկսել են օգտագործել XIX դարի վերջում XX դարի սկզբում: Կլաստերն օգ-

տագործվում էր որպես կոլորիտային միջոց (Ջ.Վերդի «Օթելլո» օպերայում կլաստերի միջոցով նկարագրվում է փոթորկի տեսարանը): «Տխուր տրամադրություն», «Անձրևոտ ամպրոպ», «Երկու պիես» մանրանվագներում կոմպոզիտորը կլաստերի միջոցով արտահայտել է համապատասխանաբար առաջին մանրանվագում տխուր տրամադրության միակար ընթացքը, մյուսում՝ ամպրոպի ճայթումը և երորդում օգտագործել է որպես ժամանակակից նոտային տեքստի գրառում:

Ժամանակակից կոմպոզիտորական նոտագրությունը հիմնականում չի նախատեսում տոնայնության նշում՝ բանալու մոտ չեն դրվում տոնայնության նշանները: Ա. Սաթյանի մանրանվագներում նույնպես հաճախ բացակայում են տոնայնության նշանները: Ստեղծագործություններում տեղի են ունենում հաճախակի տոնայնական փոփոխություններ (շեղում և մոդուլյացիա), որոնք բնորոշ են սաթյանական կոմպոզիտորական տրամաբանությանը («Անուրջներ», «Փերիների պարը», «Վալս»): Կոմպոզիտորը վարպետորեն տիրապետում է պոլիտոնալ ստեղծագործելու տեխնիկային: «Վալս»-ը, որը կարելի է անվանել *Grand Valse Brillante*, իրենից ներկայացնում հեղինակի ստեղծագործական մտքի թռիչք: Մոդուլյացիոն փոփոխություններն այս մանրանվագում՝ *c-moll, cis-moll*, այնուհետև *a-moll* և վերջում նորից *c-moll*, առաջացնում են զգացողական լարում և անկայունության զգացում: Լարումը հասնում է գագաթնակետին և, հասնելով ավարտող տոնիկայի, պարավում է:

Մանրանվագներում հաճախ են հանդիպում պոլիմետրիայի օրինակներ, որը բնորոշ է հայկական ավանդական ժողովրդական երաժշտությանը: Տիրապետելով երաժշտական տարբեր հմտությունների, պատանի դաշնակահարն ակամայից դառնում է փորձառու երաժիշտ:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում իրենից «Սոնատին»-ը, որը գրված է ավանդական դասական սոնատային ձևով և բաղկացած է երեք մասից: Առաջին մասը՝ *Allegro*, երկրորդը՝ *Andante* և երրորդը՝ *Allegretto*:

Արամ Սաթյանը, լինելով ակադեմիական ավանգարդ երաժշտության լավագույն ներկայացուցիչներից մեկը, «Մենք դաշնամուր ենք նվագում» ժողովածուում ներառել է մի շարք այդ ոճում գրված մանրանվագներ, որոնք նախատեսված են հասուն երաժիշտների համար: Գրանցից են՝ «Էսքիզ», «Երկու կարծիք», «Երկխոսություն», «Երկու պիես», «Վեց բազատել» մանրանվագները: Կարող ենք նշել, որ «Վեց բազատել» մանրանվագների շարքը առաջինը կատարել է Հայաստանի վաստակավոր գործիչ դաշնակահար Իգոր Յավրյանը (1943-2017 թթ.): Հատկանշական է, որ իր ստեղծագործական կյանքի ակունքներում Ա. Սաթյանն ստեղծագործել է բացառապես այս ոճում: Ավանգարդ երաժշտությունը կամ երաժշտական ավանգարդը՝ դա ժամանակակից ակադեմիական երաժշտության տեսակ է, որի որոշ գեղագիտական տարրերը հանդիսանում են արմատապես նորարար: Ինչ-

պես «փորձարարական երաժշտության» դեպքում «երաժշտական ավանդարդ տերմինը» հաճախ օգտագործվում է արմատական կոմպոզիտորների և նրանց ստեղծագործությունները բնութագրելու համար (4.):

Դաշնամուրի ուսուցիչներին որպես օգնություն առաջարկվում է այս շարքի մանրանվագները կատարել ազոգիկայի առումով ազատ տեմպային և մետրոշիթմիկ շեղումներով, առավել ևս, որ նոտային տեքստը հագեցած է արտիկուլյացիայի տարբեր նշաններով՝ ֆերմատաներով, լյուֆտերով, արպեջիատտոներով: Ուսուցիչներից ոմանք ծանոթ չեն ժամանակակից երաժշտության նոտագրությանը: «Երկու պիես» շարքի երկրորդ մանրանվագում կարելի է տեսնել ութ մինչև տասնութ անընդմեջ կրկնվող նոտաների հերթագայություն (репетиция), որոնք գրված են 32-րդական տևողություններով: Տևողության գիծը սկզբից նեղ է, հետո քիչ-քիչ լայնանում է, և հետո նորից նեղանում: Այս գրառումը հարկավոր է կատարել արագացման եղանակով և, այնուհետև, նորից դանդաղացման: Հայտնի է, որ կրկնվող ձայները կատարվում են տարբեր մատներով՝ 2-3, 2-3-4 կամ 1-2-3-4: Այդ արվում է մոտորիկան և մատերի զսպանակային շարժումը ապահովելու համար: Նոտաներում դրված դեպի վերև և ներքև ուղղված սլաքները նշանակում են, որ հարկավոր է ստեղնաշարը սեղմել կլաստերի եղանակով (ձեռքի ափով) ձայնահատվածի (регистр) ամենավերևի և ամենաներքևի ձայները: Այս մանրանվագում առկա են վերընթաց և վարընթաց անընդհատ շարժումով գլիսանդոներ:

Եվ վերջապես պետք է խոսենք սաքյանական երաժշտության մեղեդայնության մասին: Անսահման մեղեդայնությամբ են օժտված «Անուրջներ», «Նոկտյուրն», «Բարկարոլա», «Կապույտ երագ», «Անուրջներ» մանրանվագները: Կոմպոզիտորի հետաքրքիր մտահղացումներից է նմանակումը տարբեր կոմպոզիտորների ոճերին: «Նոկտյուրն» մանրանվագում Ա.Սաքյանը նմանակել է Շոպենի ոճին, իսկ «Փերիների պարը»՝ Պրոկոֆյևիին, «Նվիրում Բրուքսկին»՝ ջազիստ Դեյվ Բրուքսկի հայտնի «Take five» ստեղծագործությանը:

Եզրակացություն

Այս հոդվածի սահմաններում սեղմ ներկայացվեց Արամ Սաքյանի «Մենք դաշնամուր ենք նվագում» դաշնամուրային ձեռնարկ-ժողովածուն, հնարավորինս ընդհանուր գծերով պարզաբանել ենք կոմպոզիտորի մոտեցումները, մտահղացումները և դրանց իրականացումը: Երաժշտական լեզվի գունեղության, հակիրճության, պարզության և առավել կարևոր բովանդակային կերպարային հատկությունների բացահայտման շնորհիվ Արամ Սաքյանի «Մենք դաշնամուր ենք նվագում» դաշնամուրային ձեռնարկ-ժողովածուում տեղ գտած մանրանվագները դասվում են հայկական լավագույն մանկական դաշնամուրային ստեղծագործությունների շարքում: Ժողովածուն վստահ կարելի է համարել դաշնամուր-

երաժշտական գործիքների ուսուցման շտեմարան: «Այդ ստեղծագործությունների գեղարվեստական առանձնահատկությունները կապված են նրա հետ, որ հնարավորություն են ընձեռում կատարելու հատուկ գրված երաժշտություն՝ տարբեր ոճերում օգտագործելով XX դարի կոմպոզիտորական տեխնիկայի ձեռքբերումները: Շնորհիվ դրա այս ժողովածուն հանդիսանում է մեծ ներդրում պիանիզմի զարգացմանը» (2.): Մանրանվագները վաղուց ի վեր ներառված են Հայաստանի երաժշտական դպրոցների ուսումնական ծրագրում և դրանք կատարվում են զանազան համերգներում և մրցույթներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Аноян III. А.,* Фортепианная музыка Советской Армении., Ер., Айастан, 1968, стр.8
2. *Ասատրյան Ա.,* Արամ Սաթյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում, «Հայոց նորագույն պետականության քառորդ դարը», գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2017 թ.: , էջ 136
3. *Առուստամյան Օ. Ա.,* Դաշնամուրի դասավանդումն առաջին դասարանում., Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1975 թ., էջ 3
4. Nicholls David. 1998, p.318

REFERENCES

Հեղինակի մասին. Կոստանյան ԱՐՈՒՄՅԱԿ ՀԱՄԱԶԱՍՊԻ ԿՈՍՏԱՆՅԱՆ. Ծնվ.1957թ. ք. Երևան, ավարտել էմ Կոմտասի անվան ԵՊԿ 1981թ. դաշնամուրի ֆակուլտետը, պրոֆեսոր Ա. Ամբակույանի ամբիոնի Նինա Արտյոմի Գևորգյանի դասարանը: Աշխատել է Տ. Չուխաճյանի, Ա. Աճեմյանի, Մայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցներում: Մինչ այսօր աշխատում է Մայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում և 2013 թվականից՝ Խաչատուր Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանում որպես դաշնամուրի և նվագակցության դասարանի դասախոս: Ելույթ էմ ունենում համերգներով: Հեղինակ էմ մի շարք դաշնամուրային փոխադրումների ժողովածուների՝ «Միրված մեղեդիներ», «Արթուր Գրիգորյան. Երգեր», «Քո հոգու երգը», «Հին ու նու Երևան», «Մարինե Ալես. Երգեր և ռոմանսներ»: Հեղինակ էմ. Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներովե ձեռնարկի և մի շարք տպագրված գիտա- և ուսումնամեթոդական հոդվածների: Պարզևատրվել էմ միջազգային և հանրապետական մրցանակներով՝ 2016 թ. Բելոռուսի ք.Կուրշինալե I կարգի դիպլոմով; 2017թ. Հայաստանում «Ծիծեռնակ» երաժշտական մրցանակաբաշխությունում նվաճել

եմ «Լավագույն դասական պրոմ» մրցանակը; 2022 թ. Մոսկվայում կայացած գիտական, ուսումնամեթոդական և ստեղծագործամանկավարժական ծրագրերի երկրորդ միջազգային մրցույթում «Музыкальное образование-XXI», հեղինակած «Հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ մեթոդական ցուցումներով» ձեռնարկն արժանացել է 1-ին կարգի դափնեկրի մրցանակի:

Сведения об авторе: АРУСЯК АМАЗАСПОВНА КОСТАНЯН (род. в 1957г., Ереван). Окончила фортепианное отделение Ереванской государственной консерватории имени Комитаса, класс доц. Н. А. Геворкян (1981). Работала педогом фортепиано в музыкальных школах им.Т. Чухаджяна, А. Аджемяна, Саят-Новы. Преподаватель класса фортепиано и концертмейстерского мастерства Армянского государственного педагогического Университета имени Хачатура Абовяна (с 2013 года). Выступает с концертами. Автор: учебно-методического пособия "Фортепианные аранжировки песен армянских композиторов с методическими пояснениями"; ряда научно-методических и учебно-методических статей; сборников фортепианных переложений: "Любимые мелодии", "Песня твоей души", "Старый и новый Ереван", "Артур Григорян. Песни", "Маринэ Алес. Песни и романсы". Награждена: дипломом I степени Международного конкурса искусств (Белоруссия, 2013); призом "Цицернак" (Армения, 2017); лауреат I степени в Международного конкурса "Музыкальное образование-XXI" (Москва).

About the author: KOSTANYAN ARUSYAK HAMAZASP Born in 1957 in Yerevan (Armenia). In 1981 graduated from the piano department of the Yerevan State Conservatory named after Komitas, department of Professor A.Amabakumyan, piano class of Nina Artyomovna Gevorkyan. I worked as piano teacher at music schools after T.Chukhajyan and Al.Ajemyan in Yerevan. Now I work at the music school after Sayat-Nova and have been the lecturer since 2013 at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan in the piano and accompanist class. I give concerts.I am the author of the educational methodological musical notes "Piano arrangements of songs of Armenian composers with methodological advice", scientific, methodological and educational articles. I am also the author of piano arrangements "Favorite Melodies", "Song of Your Soul", "Old and Ner Yerevan", "Arthur Grigoryan. Songs", "Marine Ales. Songs and Romances".Was awarded in 2016 a first degree diploma in the international art competition in Belarus, as well as the "Tsitsernak" prize in 2017 in Armenia, laureate of the I-st degree in the international competition "Music Education-XXI" in Mosc